ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. ապրիլի 9-ից 14-ը Ուզբեկստանի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Կարեն Բրուտյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ք. Տաշքենդ, սույն թվականի ապրիլիի 9-ից 14-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Ուզբեկստանի Հանրապետություն, Համաշխարհային Բանկ (ՀԲ)

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Գնումներ, ինտեգրում, կառավարում և թափանցիկություն» խորագրով 15-րդ ֆորումին:

6. **Քննարկված թեմաները՝**

- Օրենսդրական համադրման շրջանակները գնման և կառավարման լայն համալիրների ներդրումային ծրագրերում,
- Ինչպես ստեղծել մասնավոր հատվածի վստահությունը ներդրումների ներգրավման համար պետական ներդրումային ծրագրերում,
- Պետական ներդրումների կառավարում եւ պետական-մասնավոր գործընկերություն,
- Պետական ներդրումային ծրագրերի իրականացում,
- Պետական ներդրումների կառավարում եւ պետական-մասնավոր գործընկերություն,
- Պետական ներդրումների արդյունավետության բարձրացման նպատակով պայմանագրերի կառավարում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Համաժողովի ընթացքում ելույթներ ունեցան՝

1. Հայաստանի Հանրապետության անունից՝ ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կարեն Բրուտյանը,

2. Ուզբեկստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Օդիլբեկ Իսակովը,

3. Համաշխարհային Բանկի գնումների առաջատար մասնագետներ Կնուտ Ջեյ Լեապոլդը և Ահմեդ Մերզուկը:

Միաժամանակ, ելույթներ ունեցան նաև ներկայացուցիչներ մասնակից պետություններից, որոնց հետ քննարկվեցին ներդրումների բնագավառում մասնավոր հատվածի ներգրավման համար ստեղվելիք ավելի շահավետ պայմանների վերաբերյալ տարբեր մոտեցումներ:

Համաժողովին քննարկվեցին պետական-մասնավոր գործընկերության (PPP) գնումների առանձնահատկությունները: Մասնակից երկրների օրինակներով ներկայացվեցին պետական-մասնավոր գործընկերության գնումները պետական գնումների ռեժիմում ներգրավելու օրինակները և դրանց հաջողության կամ ձախողման հետևանքներ:

Քննարկվեցին նաև ներդրումների համար հատկացված ռեսուրսների օգտագործման արդյունավետության համար անհրաժեշտ շահավետ պայմանների արդիականացման հարցեր, որի վերաբերյալ մասնակից երկրները ներկայացրեցին իրենց օրինաները:

Քննարկվեցին թեմաներ, տվյալների շուկայական վերլուծության, գնումների մոնիթորինգի, առաջընթացի հաշվետվության, ռիսկերի վերլուծության, ներդրումային նախագծերի աուդիտի, գնումների ոլորտում տարբեր գործիքների եւ մեթոդների փոփոխության մասին, մասնավորապես, կենտրոնացված գնումների համատեքստում, որոնք խթան կհանդիսանան գնումների ռազմավարական որոշումների կայացման և ռիսկերի կառավարման արդյունավետության համար:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ՝ կողմերի հետ համագործակցային ուղղությունների և մասնագիտական գիտելիքների փոխանակման շարունակականության ապահովման և ընդլայնման շուրջ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Համաժողովին ձեռք բերված պայմանավորվածություններն իրագործելու ընթացքում ձեռք բերված արդյունքները յուրաքանչյուր մասնակից երկիր կներկայացնի ապագայում կազմակերպվելիք ֆորումի ընթացքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

18.04.2019թ.